

**ԻԼՅԱ ԳԵՐՇԵՎԻՉ, ԲԱՐԲԱՌԱՅԻՆ ԲԱԶՄԱԶԱՆՈՒԹՅՈՒՆԸ
ՀԻՆ ՊԱՐՄԿԵՐԵՆՈՒՄՑ³
(Գրախոսություն մաս 1)**

Մեծ է Իյա Գերշելվիչի դերն իրանական լեզվաբանության, հատկապես, բարբառագիտության բնագավառում: Ի թիվս մի շարք աշխատանքների, նրա “Dialect Variation in Early Persian” հոդվածը գրված 1965 թ., նոր խոսք էր այս ոլորտում: Նա իր այս հոդվածով փաստորեն գրեթե ամբողջովին մերժում էր մարերենի կամ մարական լեզվի գոյության փաստը և առաջարկում մի նոր տեսություն, որը գերակայող դարձավ հետագա 10 տարիների ընթացքում, մինչ այն պահը, որը հրապարակվեցին նախ գերմանացի իրանագետ, գերանական դասական արևելագիտական պրոֆի հավատարիմ ներկայացուցիչ Մանֆրեդ Մայրհոֆերի (Manfred Meyrhofer) “Die Rekonstruktion des Medischen”-ը (1968 թ.) և ֆրանսիացի իրանագետ Պիեռ Լրկոքի (Pierre Lecoq) “La langue des inscriptions achémenides”-ը (1974) հոդվածները, որոնք, փաստորեն, կարող ենք անվանել Ի. Գերշելվիչի հոդվածի գրախոսականներ:

Սակայն մինչ Մ. Մայրհոֆերի և Պ. Լրկոքի հոդվածների հրապարակումը, 10 տարուց ավել Ի. Գերշելվիչի տեսակետները իշխող են եղել իրանական բարբառագիտության բնագավառում և նույնիսկ ունեցել են հետևորդներ, որոնցից ամենահայտնին ռուսական արևելագիտության կարկառուն ներկայացուցիչներից Վասիլի Ի. Աբանն էր: Վերջինիս այն աստիճանի է ազդվել Ի. Գերշելվիչի տեսակետներով, որ «մարական լեզուներին» կամ «մարերենին» վերագրվող “диалектная пестрота” հասկացությունը “Мидийские” элементы в персидском” կարճ հոդվածում, ըստ երևույթի վերցրել է իրանական լեզվաբանության մեջ Ի. Գերշելվիչին պատկանող (լեզվաբանական) «բազմազանություն» variety եզրույթից (Dialect Variation): Այս հոդվածում Ի. Գերշելվիչը բացահայտորեն հիշատակվում է որպես «ոգեչնչող»: Հենց այս կարճ աշխատանքում էլ Վ. Աբանի՝ մարերենի նկատմամբ վերաբերմունքն

¹ ԵՊՀ արևելագիտության ֆակուլտետի, իրանագիտության ամբիոնի դասախոս, էլ. փոստ՝ aharon.vardanian@ysu.am

² ԵՊՀ արևելագիտության ֆակուլտետի, իրանագիտության ամբիոնի ուսանող:

³ Iya Gershevitich, “Dialect variation in early persian”, Transaction of the Philological Society, vol 63, No., 1, 1964, pp11-29

առավել «գերշխիյան» է թվում, քան Գերշխիյնը: Վ. Արանի մոտեցումը մարական լեզուն վերականգնելու հավանականությանն, ըստ էության, ծայրահեղ բացասական է:

Այսպես, խոսելով «մարերենի» մասին, նուրբ հեզնանքով գրում է.

«Լեզվաբանության պատմության մեջ դժվար է գտնել մեկ այլ նման օրինակ, երբ այսքան լայնորեն ու ազատորեն գործածվեն մի լեզվի տվյալներ, որի մասին ոչինչ հայտնի չէ»⁴:

Մակայն հետագա ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ Իյա Գերշխիյի տեսակետները ոչ միայն անհատական, անձնական հետաքրքրություններից էին բխում, այլ համակարգային էին:

Այսպես՝ 1950-ականներին Լոնդոնի համալսարանի իրանագետ-լեզվաբանները չափազանց հետաքրքրված էին մարերենի կամ մարական լեզվի հարցում ներգրավվածություն ունենալով:

Այս ամենի վառ օրինակ է այդ տարիների լոնդոնյան դպրոցի առաջատար Վալտեր Բրունու Հենինգի ցուցաբերած մեծ հետաքրքրվածությունը դեպի հյուսիսարևմտյան Իրանում խոսվող բարբառները: Հենց նրա խորհրդով էլ վերջինիս աշակերտ իրանցի Էհսան Յարշաթերը որոշում է ստանձնել այդպիսի բարբառների փնտրտուքը: 1969 թ. Է. Յարշաթերը հրապարակում է հարավային թաթերենին վերաբերող իր դոկտորական դիսերտացիան Mouton-ի նոր շարքի՝ “Median Dialect Studies” վերնագիրը կրող նոր հատորում, սակայն այն մեկուսացված մնաց և այդես էլ, կոպիտ ասած, զագացում չստացավ: Ի հակադրություն «թաթ» նշանակյալի «ընդհանուր և անորոշ կիրառության», երբ թաթական էին անվանվում հյուսիսարևմտաիրանական բոլոր բարբառները, Է. Յարշաթերն իր աշխատանքի ներածության մի ծանոթագրության մեջ պնդում է, որ ավելի ճիշտ կլիներ դրանք «մարական բարբառներ» կոչելը⁵: Է. Յարշաթերի ուսումնասիրած բարբառներն արտացոլում են Ատրպատականից գետից հարավ մինչև այն տարածաշրջանն ընկած լեզվական շրթան, որտեղ թալիշական բարբառները միանում են ամենահյուսիսային թաթականներին՝ մինչև այն շրջաններն, ուր ամենահարավային թաթական բարբառներն իրենց հերթին հատվում են կենտրոնական թալիշական բարբառներին: Փաստացի՝ ուսումնասիրությունը ներառում էր Մեծ Մարաստանում և Ատրպատականում խոսված և խոսվող լեզուները: Ուսումնասիրության մեջ նա ցույց տվեց, որ սխալ է ենթադրել, որ Ատրպատականում խոսվող

⁴ Абаев В. И., “Проблемы лингвогеографии и межязыковых контактов”, Этимология, Москва 1966, էջ 247-63:

⁵ Yarshater E., A Grammar of Southern Tati Dialects, The Hauge-Paris, 1969, էջ 17:

իրանական բարբառները նորահայտ են՝ մուտք գործած իրանախոս այլ շրջաններից, ընդհակառակը՝ դրանք հնագույն ժամանակներում այս տարածքներում խոսված բարբառների ուղիղ ժառանգորդներն են: Համաձայն Է. Յարշատերի (ավելի ուշ շրջանի) ձևակերպման՝

«Մարական ժամանակներից սկսած՝ հիշատակված չէ մի որևէ համընդամուր ներգաղթ ու ներխուժում, որը կարող էր մարական ժողովուրդներին դուրս մղել իրենց տարածքներից, և պատմական աղբյուրներում մարական ժողովուրդների գանգվածային արտագաղթներ ևս արտացոլված չեն: Բնականաբար, առաջ է գալիս այն հետևությունը, որ մարական տարբեր ցեղերի բարբառները շարունակել են խոսվել պարթևների և Սասանյանների ժամանակներում և, չնայած նվազ չափով, բաց շարունակում են խոսվել նաև այսօր: Դրանք այժմ պահպանված են Ատրպատականի, Չանջանի, Ղազվինի և հարակից այլ տարածքներում, և, ավելի լայնորեն՝ ինչպես Կենտրոնական Իրանի մի շարք գյուղերում, այնպես էլ տարածաշրջանի հրեական համայնքներում»⁶:

Իլյա Գերշևիչը, որը Է. Բենվենիստի ու Վ.Բ. Հենինգի հետ միասին Է. Յարշատերի դոկտորական ատենախոսության համաձայնագրովի կազմում է եղել, Լոնդոնի համալսարանի աշխատանքային մթնոլորտից ոգևորված՝ ևս չափազանց հետաքրքրված էր բարբառագիտական տեսանկյունից մարա-պարսկական հարաբերությունների հարցով: Իրականում՝ հարցի վերաբերյալ Վ. Հենինգի ակնարկներում առկա շրջահայաց ձևակերպումները վկայում են լոնդոնյան դպրոցի զգուշավոր մոտեցումը այն խնդրին, թե ինչ տեսակի հյուսիսարևմտաիրանական բարբառ կարող է լինել «մարերի լեզուն»: Ինչ վերաբերում է Վ. Հենինգի տեսակետներին՝ Պ. Լրկոթը առավել հակված է դրանք ոչ այդքան տարբեր համարել իր սեփականից, համաձայն որոնց՝ «հին պարսկերենը» պետք է, որ «մարա-պարսկական խառը» մի լեզու լինի⁷:

Վերջինս, շարունակելով Ի. Գերշևիչի տեսության քննադատությունը, տալիս է հետևյալ ձևակերպումը. «Որքան էլ պարտադրապա լինի՝ Գերշևիչի առաջարկված լուծումը գրեթե հանգեցնում է մարականության վերացմանը»⁸: Իրականում, սակայն, պետք է նշել, որ Ի. Գերշևիչը չի ժխտում լեզվական այն փուլի գոյությունը, որը մենք անվանում ենք «մարական», և որը

⁶ Yarshater E., “The Jewish Dialect of Kāshān”, Jerusalem Studies in Arabic and Islam, 27, 2002, էջ 441:

⁷ Lecoq P., “La langue des iscriptions achéménides”, Commémoration Cyrus. Actes du Congrès de Shiraz 1971 et autres études rédigées à l’occasion du 2500^e anniversaire de la fondation de l’empire perse: homage universel. II, Acta Iranica, 2, Téhéran-Liège, 1974, էջ 55-56:

⁸ Lecoq P., նույն տեղում, 1974, էջ 55:

կարող էր արեմենյան լեզվակիրների կողմից ևս «մարական» ընկալվել՝ իր որոշակի հնչյունաձևաբանական հատկանիշներով: Նա պարզապես ընդգծում է, որ կարիք կա երկու խմբերի միջև հարաբերությունները կարգավորել երկլեզվության շրջանակներում: Այստեղ պետք է նշել, որ Ի. Գերշևիչը գրեթե երբեք այս թեմաներով իր աշխատանքներում չի գործածում «երկլեզվություն» եզրույթը, հաճախ դիմում է «մարապարսկական» կամ «պարսկա-մարական» հայեցակարգին:

Ի պաշտպանություն մարական լեզվի գոյության տեսակետի Մ. Մայրհոֆերի հրապարակած Vortrag-ը⁹ «միակ ակնարկ-հրապարակում-գրաքննադատություն էր, որում հին պարկերեն-մարերեն հարաբերակցության հարցը քննարկվում է ժամանակակից լեզվաբանության այնպիսի եզրեր հաշվի առնելով, ինչպիսիք են «հնչյունական համակարգերը», «ենթահնչույթային տարբերակները» և այլն:

Անգամ Ի. Գերշևիչը՝ «բարբառային տարբերակման» իր նորարարական մոտեցմամբ, խույս չի տալիս Մ. Մայրհոֆերի քննադատությունից: Մ. Մայրհոֆերի հիմնական առարկությունն Ի. Գերշևիչի տեսությանն այն է, որ նա խառնում է հնչյունական մակարդակները:

Այնուամենայնիվ՝ Մ. Մայրհոֆերի խիստ լեզվաբանական փաստարկները շատ չեն տարբերվում «փոխառման տեսության» կողմնակիցների առաջ քաշած ավանդական կետերից, որոնք են՝

1) մարերը «առաջին իրանական կայսրության հիմնադիրներն» են «որոնցից էլ կատարվել են փոխառությունները»:

2) «Աքեմենյան շրջանի մարական անունները ենթարկվում են այն հնչյունական օրենքներին, իրանական իրանական ծագման, սակայն ոչ պարսկերեն բառերը, որոնք Աքեմենյան արձանագրություններում փոխառված են առավել պրեստիժային լեզվից»:

3) «Մարերենի և պարսկերենի հարաբերակցությունն արտահայտված է ավելի ուշ շրջանի իրանական բարբառների աշխարհագրական տարածման մեջ, որը նաև համապատասխանում է հին պարսկերենի և փոխառյալ մարական բառերի հնչյունական տարբերություններին»¹⁰:

Ամփոփելով Գերշևիչ-Մայրհոֆեր բանավեճը, տպավորություն է ստեղծվում, որ երկուսն էլ միմյանց հետ չհաղորդակցվող զուգահեռ

⁹ Mayrhofer M., “Die Rekonstruktion des Medischen”, Anzeiger der phil.-hist. Klasse der Österreichischen Akademie der Wissenschaften, 105, 1968, էջ 1-22:

¹⁰ Նույն տեղում, էջ 3:

իրականություններում են ապրել: Ինչպես վերը նշեցինք, Իլյա Գերշևիչին է պատկանում (լեզվաբանական) «բազմազանություն»՝ variety եզրի ներմուծումն իրանական լեզվաբանության մեջ:

Ինչ վերաբերում է Մանֆրեդ Մայրհոֆերին, ապա հին պարսկերենը որպես հաստատուն համակարգ ներկայացնելուն հակված լինելով՝ նա, բնականաբար, որպես նման համակարգ է պատկերացնում նաև մարերենը, որը հին պարսկերենի հետ շփվում է «*համակարգը համակարգի հետ հարաբերակցությամբ*» սխեմայով և դրանում որպես մնացուկներ թողնում «*ոչ իրանական բառեր ու անուններ*»: Ընդհանուր առմամբ պետք է փաստել, որ գիտական համայնքը կանգնեց Մ. Մայրհոֆերի կողքին: Այս կապակցությամբ Օսվալդ Սեմերենյին նշել է. «*Գերշևիչը հավանաբար միայնակ է իր այն տեսակետում, որ xšāyaθya- -ն պարսկական ձև է*»¹¹:

Մի քանի տարի անց Գերշևիչ-Մայրհոֆեր բանավեճին է միանում նաև Դեյվիդ Նիլ Մակքենզին՝ առարկելով Ի. Գերշևիչի աշխատանքում պարունակվող որոշ ենթադրությունների¹²:

Իլյա Գերշևիչի 1970թ. որոշեց համառոտ պատասխանել¹³ վերոնշյալ քննադատություններին: Նրա պատասխանի տոնայնությունից և զայրացկոտ պատասխաններից կարելի է ենթադրել, որ վերջինիս վիրավորել են իր տեսության հանդեպ քննադատական մոտեցումները և նա դրանք անձնական բնույթի է ընկալել: Այսպես. «*Այս իրականության վերաբերյալ իմ սպասումը, Մայրհոֆերի ջերմ աջակցությամբ, մերժվեց Մակքենզիի կողմից: . . . Մաք-Զենզիի մեջբերումից [...] անտեղյակ ընթերցողը կարող է կարծել, որ ես ասել եմ, որ պահ. s-ն հակապատմական է. . . Մակքենզին, կրկին Մայրհոֆերի աջակցությամբ և թույլտվությամբ, կասկածի տակ է դնում մ. պրակ. բառակարգի h < θw անցումը այն դեպքը, երբ ես կարողացել էի ի հայտ բերել այն և ապացուցել*»¹⁴:

Մաս 1

Իրանական բարբառագիտության բազմաթիվ գլուխկոտրուկներից է պարսկերենում, բացի բազմաթիվ արաբական և այլ օտար լեզուներից

¹¹ Szemerényi O., “Iranica V (Nos. 59-70)”, Monumentum H. S. Nyberg, II, Téhéran-Liège, 1975, էջ 314:

¹² MacKenzie D. N., “The Origins of Kurdish”, Transactions of the Philological Society, 1961, էջ 68-86:

¹³ Gershevitch I. “Island-Bay ant the Lion”, Bulletin of the School of Oriental and African Studies, University of London, Vol.33, No. 1, In Honour of Sir Harold Bailey (1970), pp. 82-91

¹⁴ Gershevitch I., “Island-Bay and the Lion”, Bulletin of the School of Oriental and Asian Studies, 33, 1970, էջ 82-91:

կատարված փոխառություններից, բառապաշարի մի շարք իրանական բառեր, որոնք ներթափանցել են այս լեզու, համարվում են ոչ պարսկական:

Համեմատական լեզվաբանները պնդում են՝ *šāh* «*թագավոր*»՝ բառը պարսկերենում բնիկ պարսկական չէ, քանի որ այդպիսին լինելու դեպքում այն պետք է ունենար *šāš, «*քաղաք*» տեսքը, քանի որ *šahr* բառը, որն ավելի վաղ շրջանում նշանակում էր «*թագավորություն*», պետք է ունենար *šas տեսքը, պարկերեն *sang*՝ «*քար*»-ի փոխարեն՝ **hang*, *buzurg*՝ «*մեծ*»-ի փոխարեն՝ **buhurg*, *asp*՝ «*ձի*» բառի փոխարեն՝ **as*, *āsmān*՝ «*երկինք*» բառի փոխարեն՝ **āhmān*, և անգամ *Fārsī*՝ «*պարսկերեն*» բառի փոխարեն՝ **Pāhlī*:

Այս բոլոր, ինչպես նաև ամենաստվորական իմաստներ արտահայտող բազմաթիվ այլ բառաձևեր անհամաձայնության մեջ են պարսկերենի հնչյունաբանության այս կամ այն կանոնի հետ, սակայն համապատասխանում են մարական հնչյունաբանության մասին ունեցած մեր փոքրաթիվ պատկերացումներին կամ դրանցից դուրս բերվող հնարավոր կանոններին: Հետևաբար՝ դրանք հոչակվել են *մարական*: Դրանք ավելի շուտ մարական են համարվում, ոչ թե պարսկական, քանի որ դրանցից որոշների նախաձևերը ենթադրյալ ոչ պարսկական ձևով հանդիպում են արդեն հին պարսկերենում՝ մոտ Ք.ա. 520-ականների շուրջ ընկած ժամանակահատվածում, երբ պարսիկները, ոչ շատ վաղուց, մարերից մի ընդարձակ կայսրություն գրավելով և առանձնանալով, հավանաբար ազդվել էին մարերի ինչպես վարչական, այնպես էլ հիմնականում լեզվամշակութային բառապաշարի շերտերից:

Սակայն, Ք.ա. 6-րդ դարում արդեն ենթադրյալ փոխառությունների ընտրությունը սխալական է թվում: Ինչո՞ւ է հ. պրսկ. «*թագավոր*»՝ *xšāyaθya-* բառը՝ ն. պրսկ. *šāh-*ի նախորդը, փոխառվել մարերենից, մինչդեռ «*թագավորություն*» բառը մնացել է ճիշտ իր հին պարսկական *xšassa-* ձևով: Ինչո՞ւ պիտի հին պարսիկները վերցնեին «*մեծ*» բառի մարական *vazrka-* ձևը, որը ն. պրսկ. *buzurg-*ին նախորդող ձևն է, սակայն պահեին «*մեծագույն*»-ի իրենց սեփական *maθišta* տարբերակը՝ ն. պրսկ. *mahist-*ի նախնին: Ի՞նչն է դրդել նրանց մարերենից փոխառել *asman* «*երկինք*» բառը:

Մյուս անհանգստացնող հանգամանքը հին պարսկերեն բառերի ու դրանց մարական ու նոր պարսկերեն գուգահեռների միջև համեմատաբար և բավականին հաճախակի դադարն է: Եթե հ. պրսկ. *pusa-*՝ «*որդի*» բառը, որին մարերենում պետք է համապատասխաներ **puθra-* ձևը, միջին պարսկերենում պահպանվել է *pus* տեսքով, ապա

ինչո՞ւ է հ. պրսկ. *xšassa-* -ն, որին մարերենում համապատասխանում է *xšaθra-* -ն, միջին պարսկերենում իր տեղը զիջել և փոխարինվել *šahr-*ով, որը մար. *xšaθra-* -ի շարունակողն է: Եվ միջին պարսկերենում հ. իր. *-θr-*ից ծագող *-hr-*ով նույնքան բառեր կան, որքան *s-*ով: Նմանատիպ դադարը դիտարկելի է նաև մ. պրսկ. *sag* կամ *sang*՝ «*քար*» բառի համար, որը հասկանալի է որպես մար. **asa(n)ga-* -ի շարունակություն, սակայն որևէ կերպ չի կարող ծագել հ. պրսկ. վկայված *aθa(n)ga-* -ից, որը միջին պարսկերենում պետք է որ դարձած լիներ **ha(n)g*:

Անշուշտ, ինքնանպատակ կլիներ հարցնել «ինչո՞ւ այսպես»՝ առանց ունենալու «իսկ ինչո՞ւ ոչ մյուս՝ հակառակ կերպ» հարցի պատասխանը: «Ինչո՞ւ են պարսիկները մարերենից փոխառել «*թագավոր*» և «*քար*» բառերը» հարցի հակառակը կլինի՝ «ինչո՞ւ չեն կարող «*թագավոր*» և «*քար*» բառերը պարսկերեն լինել: Այս վերջին հարցին է, որ տվյալ հոդվածում պետք է փորձենք պատասխան գտնել:

Պարսկերենում ներքին բարբառային բաժանման խնդիրն, ի տարբերություն պարսկերենում ոչ պարսկական տարրերի առկայության հարցի, մինչ այս գրեթե չի քննարկվել: Պարսկերենի պատմական քերականության մասին ողջ գրականության մեջ մենք ներքին բարբառային տարբերակման միայն մեկ հատակ աղերս ենք գտել: Դա պրոֆեսոր Վ. Հենինգի մի պնդումն է՝ արված 1933թ. -ին¹⁵ կապված նոր և միջին պարսկերենների միջև նշմարելի մի տարբերության՝ հնիս. **-ṣy-* հնչյունախմբի կիրառության մասին, որն ավետադարձ լեզվում հանդես է գալիս որպես *-sy-*:

Մյուս կողմից՝ ունենք մ. պրսկ. *wēš*, ն. պրսկ. *bēš* «ավելի»-ն՝ հ. իր. համեմատական մի ձևից, որի ավետադարձը կլիներ **vasyah*¹⁶,

¹⁵ ZII ix, 207. (Henning, W., “Das Verbum des Mittelpersischen der Turfanfragmente”, Zeitschrift für Indologie und Iranistik, bd. 9, 1933-34, p. 207)

¹⁶ Մեր կողմից Indo-Iranica (Mélanges Morgenstierne)-ում (Gershevitch, I., “Iranian chronological adverbs”, Indo-Iranica. Mélanges présentés à Georg Morgenstierne à l’occasion de son soixante-dixième anniversaire, 1964, pp.78-88) ի աջակցություն մ. պրսկ. *pēš-*ի՝ հ. իր. **pasyā-*ից սերելու բերված տվյալներից բել. *pis-*ը պետք է համվի: Մենք եկել ենք այն եզրակացության, որ չնայած որ Վ. Գեյզերը սխալ էր՝ կարծելով, որ բել *pišti-parampōšti-*ի «չորս օր անց» նախածանցը նշանակում է «հետո», նա ճիշտ էր *pis-* *parampōšti-*ի նախածանցը *pas-*ի հետ նույնականացնելիս, քանի որ միայն այսպիսով բել. երկու հոմանիշների փոխադարձ հարաբերությունը կհամապատասխանի ն. բաշկ. համարժեք հոմանիշների՝ «չորս օր անց» նշանակող *pištom-para’uš-*ի և *pas-para’uš-*ի հարաբերությանը: Բել. *pis-* -ի *i-*ն, որը մեր թյուրիմացության հիմնական պատճառն է եղել, այս դեպքում կլինի ավելի վաղ շրջանի **pas-* «հետո»-յի *a-*ի ազդեցության արդյունք, միևնույն երկրորդ բաղադրիչն ունեցող հոմանշային կառույցների *pišt-* «առաջ»-ում *i* ունենալով: Այսպիսով **pasyā-*ի

ու նմանապես նաև ն. պրսկ. *kašaf* «կրիա» բառը հ. իր. մի ձևից, որը համապատասխանում է ավեստ. *kasyapa-* -ին¹⁷ և վեդ. *kaśyápa*-ին: Ավ. -*sy-* խումբն այստեղ ներկայացված է *š*-ով, որին նախորդող կարճ ձայնավորը պարսկերենում շեշտի տակ քմայնանում և երկարում է¹⁸:

Այս զարգացմանը որպես հակադրություն է հանդես գալիս ն. պրսկ. *mih* «մեծագույն» բառի օրինակով կատարված զարգացումը, որի մանիքեական մ. պրսկ. նախորդը *mhy* տեսքով է և համապատասխանում է ավեստ. *masyah-* -ին¹⁹:

Վ. Հենինգի տեսակետը գնահատելու համար պետք է նկատի ունենալ, որ դեպքերի մեծ մասում նրա մոտ ավեստ. -*s*-ին համապատասխանեցվում է հնդեվր. շփական-քմային²⁰ և հ. պրսկ. միջատամնային խուլ²¹ հնչյունը: Օրինակ՝ ավեստ. գերադրական *masišta-* «մեծագույն»-ի հ. պրսկ. համարժեքը *maθišta-*ն է: Հետևաբար՝ հին պարսկերենում հնդեվր. անձայն քմային հնչյունը²², գոնե նախաձայնավորական դիրքում, սերտանել է հնխ. խուլ ատամնային հնչյունից սերած -*θ*-ին: Նյութի հակիրճության համար մենք կքննարկենք հ. պրսկ. *θ* «քմային թետան», որը ծագում է հնխ. *- *ʔ* -կամ *- *ʔh-*

վերակազմությունը մնում է միայն հրվ. բաշկ. *pester*-ի (որի *e*-ն կարող է ներկայացնել կիպյն հ. իր. ձայնավոր կամ երկհնչյուն) *s*-ի, ռուդբարիով *pēster*-ի և բել. *pēsar-* -ի հիման վրա, որոնք բոլորն էլ նշանակում են «առաջ»: Բել. *pis-* -ն այլևս չդիտարկելն արդեն ավելորդ է դարձնում ն. պրսկ. *kih*-ի կամ բել. *kis(ān)*-ի ձայնավորի համեմատությունը:

¹⁷ Հենինգի մեջբերած մյուս օրինակները, բացի հայ. *šau*-ից (որի մասին տե՛ս ներքևում՝ էջեր 5,18) ներառում են ն. պրսկ. *xurōš-* «գոռալ» և մ. պրսկ. *hadyš-* (ն. պրսկ. *andēš-*) «մտածել, խորհել» բառերը: Վերջինս *š*-ով է ի հայտ գալիս նաև մանիքեական պարթևերենում (*ʾndyš-*), որտեղ այն, հետևաբար, պարսկերեն փոխառություն է ինչպես *ʾhrʾm-* -ը, *ʾwdyʾ-* և *brhm-* -ը, հմմտ. ներքևում՝ էջ 9:

¹⁸ Նախորդող *au* երկհնչյունը չի քմայնացվել, հմմտ. *xurōš-*, չի քմայնացվել նաև *ā-*ն՝ դատելով մինչ այժմ չնույնականացված ն. պրսկ. *parxāš* «կռիվ, վեճ» < *pari* + **xāsyā-* (**xāθya-*)-ից՝ ի հակառակ սողո. *ʾxʾs*, *ʾnyʾs* «պայքար», *pxʾs* «վեճ», < *ā*, *ham*, *upa* + **xāsa*: Հմմտ. ներքևում՝ էջ 27:

¹⁹ Նմանապես և ավեստերեն *kasyah-* -ին համապատասխանող ն. պրսկ. *kih* «ավելի փոքր»-ը, որը Հենինգն իհարկե մեջբերել է: Վերոբերյալ տեքստում, որը կարդացվել է Միության մի հանդիպման ժամանակ, օրինակների թիվը հասցվել է նվազագույնի՝ փաստարկման գիծը չաղավաղելու համար:

²⁰ Palatal fricative – շփական բաղաձայնի տեսակ, որը նաև քմային է, այսինքն՝ արտասանվում է լեզվի՝ քիմքին հպման միջոցով :

²¹ Voiceless dental fricative (spirant) - *θ*

²² Voiceless palatal fricative - *ç*

հնչյունից, և «ատամնային թետան»՝, որի նախնին հնիս. **-t-*ն կամ **-th-*ն է: Նույն կերպ է նաև հ. պրսկ. ձայնորդ ատամնայինի²³ դեպքում. «քմային դեղտա»՝ հնիս. **-ǵ-* կամ **-ǵh-*ից, և «ատամնային դեղտա»՝ հնիս. **d* կամ **dh-*ից:

Մենք քմային թետայի առկայություն ենք նկատում *mabīšta-* -ում, որը հին պարսկերենում տարբերակելի չէր, օրինակ, *raθa-* «կառք» բառի (կապված է լատ. *rota-*ի հետ) ատամնային թետայից: Մակայն ատամնային *-θ-*ն, երբ անմիջականորեն հաջորդվում է *-y-in*, հին պարսկերենում դառնում է *-š-*. սրա բնութագրական օրինակ է հ. պրսկ. *mṛšū-* «մահ» բառն՝ ի համեմատություն ավ. *mārəθyu-* և վեդ. *mṛtyú-*ի:

Վ. Հենինգը հետևողականորեն պնդում է, որ ն. պրսկ. *bēš-*ի հ. պրսկ. նախնին պետք է եղած լինի **vaθyah-* -ը՝ հնիս. քմայինից ծագած հ. իր. *-s-*ից առաջ եկող *-θ-* ձևով ինչպես հ. պրսկ. *mabīšta-*ում, և **vaθyah-*ում քմային թետան *-y-*ից առաջ *-š-* է դարձել *mṛšū*՝ «մահ» բառում ատամնային *θ-*ի՝ *y-*ից առաջ *-š-*ի փոխվելու դեպքին համապատասխան²⁴: Մյուս կողմից՝ հ. պրսկ. համարժեք **maθyah-* -ում՝ ն. պրսկ. *mih-*ի նախորդող ձևում, *θ-*ն, չնայած որ քմային է եղել, *-y-*ից առաջ *-š-*ի չի փոխվել:

Այսպիսով Վ. Հենինգի նկատի ունեցած պարսկերենի բարբառային տարբերակումն հետևյալն է. հին պարսկերենի ձև, որում քմային *-θ-*ն, ի տարբերություն ատամնային *-θ-*ի, *-y-*ից առաջ մնացել է անփոփոխ և արդյունքում վերածվել *-h-*ի միջին և նոր պարսկերենում, և ստանդարտ լեզվից տարբեր հին պարսկական մի բարբառ, որում քմային *-θ-*ն *-y-*ից առաջ փոխվել է *-š-*ի ճիշտ այնպես, ինչպես ատամնային *-θ-*ն:

Վ. Հենինգի տեսությունը բավական հավանական է թվում: Մակայն մինչ այն անվերապահորեն ընդունելն անհրաժեշտ է երկու հարցում պարզություն մտցնել: Առաջինը վերաբերում է նրա ենթադրությանը՝ ավելի վաղ շրջանի *-s-*ի և դրան հաջորդող *-š-*ի միջև միջանկյալ *-θ-*ի գոյությանը: Եթե միջին պարսկերեն *wēš-*ի անմիջական նախորդը **vašyah-* -ն է, արդյո՞ք իսկապես անհրաժեշտ է որ վերջինիս անմիջական նախորդն էլ եղած լինի **vaθyah-* -ը: Եթե ենթադրյալ **vaθyah-* -ն իր քմային թետայով, միևնույնն է, պիտի որ ծագի ավելի վաղ **vasyah-* -ից, արդյո՞ք չէր կարող **vašyah-* -ն անմիջապես զարգանալ հենց **vasyah-* -ից:

²³ Voiced dental fricative - δ

²⁴ Վերոբերյալը Հենինգի մի կանոնի՝ ն. պրսկ. *bēš-*ի նախորդների մասին մեր սեփական, մանրամասնած ձևակերպումն է, որը նա արտահայտել է ավելի հակիրճ՝ միայն ընդհանուր եզրերով:

Այսպիսի ենթադրությունը կարող է անգամ ավելի հավանական լինել, քանի որ *h* . պրակ. **vašyah-* -ի դրական աստիճանը *vasai* կամ *vasi* է՝ *s*-ով և ոչ *θ*-ով, և որևէ հիմք չկա փաստելու, որ համապատասխան գերադրական ձևը **vasišta-* չէր, այլ **vaθišta-*:

Կախված այն բանից, թե ինչպես ենք մենք լուծում տալիս միջանկյալ *θ*-ի գոյության վերաբերյալ հարցին, առաջ են գալիս ևս երկու հարակից հարցեր: Եթե որոշում ենք, որ **vašyah-* -ն ուղղակիորեն ծագում է **vasyah-* -ից, ապա պետք է հարց տալ՝ ճիշտ է արդյոք **vašyah-* -ը կամ **vasyah-* -ը դիտարկել որպես պարսկերեն բարբառային ձևեր: Քանի որ եթե **vašyah-* -ի նախապատմության մեջ տեղ չի գտել հին պարսկերենին բնորոշ *-s > -θ*- անցումը, ապա **vasyah-* -ից ուղիղ սերող **vašyah-* -ը կարող է նաև պարսկերենում մարական փոխառություն լինել:

Մյուս կողմից՝ եթե համաձայնում ենք Վ. Հենինգի հետ, որ **vašyah-* -ը զարգացել է **vaθyah-* -ից, ապա պետք է հարցնենք՝ արդյո՞ք **maθyah-* -ում *θ*-ի պահպանումն իսկապես հնչյունաբանական հիմք է ունեցել, թե՞ պարզապես տարրնմանության արդյունք է: Որովհետև, քանի որ հին պարսկերենում վկայված համապատասխան գերադրական ձևը *maθišta-* -ն է, որտեղ *θ*-ն, *-y*-ից առաջ ընկած չլինելով, *-š*-ի փոխվելու որևէ պատճառ չի ունեցել, ապա բաղդատական **maθyah-* -ը *maθišta-*-ի ազդեցությամբ պետք է որ դիմակայեր **mašyah-* դառնալու հնչյունական ճնշմանը:

Մակայն եթե տարրնմանությունն է եղել **maθyah-* -ի անփոփոխ մնալու պատճառը, ապա Վ. Հենինգի՝ **vašyah-* -ը մեկ այլ՝ **maθyah-* -ը պարունակողից տարբեր պարսկական բարբառի վերագրելն արդարացված չի լինի. **vašyah-* -ը պարզապես կլինի մի կանոնի օրինակ, որի համար **maθyah-* -ը դիտարկվում է որպես բացառություն՝ տարրնմանության պատճառով:

Ուստի, Վ. Հենինգի տեսությունը փորձարկելու համար մենք պետք է նախ և առաջ որոշենք՝ *h* . պրակ. **vašyah-* -ն, իսկապես, ենթադրում է ավելի վաղ շրջանում **vaθyah-*-ի գոյություն: Եթե գտնում ենք, որ ենթադրում է, ապա պետք է հետագա հարցադրում անենք՝ պարզելով՝ արդյո՞ք որևէ հիմք կա մտածելու, որ **maθyah-*-ի *θ*-ն կարող է պահպանված լինել *maθišta-*-ի տարրնմանական ազդեցությունից անկախ:

Ինչ վերաբերում է **vašyah-* -ի անմիջական նախորդող բառաձևին, ապա, եթե *h* . պրակ. *θ*-ն *-y*-ից առաջ դարձել է *-š-*, կարելի է կարծել նաև, որ բնական կլիներ, եթե *-s*-ն էլ իրեն հաջորդող *-y*-ի ազդեցությամբ քմայնանար ու փոխվեր *-š*-ի: Խնդիրը կարող է անլուծելի թվալ: Ինչպե՞ս կարող է *-sy*-ից ծագող *-š*-ն հայտնել մեզ՝ արդյո՞ք այն ծագում է միջանկյալ փուլի *θy*-ից:

Այնուամենայնիվ, Վ. Հենինգի մեջբերած -*š*-ով պարսկերեն բառերից մեկը հայերեն *šau* «*սև*»-ն է, որին ավ. համապատասխանում է *syāva*-ն: Փաստարկված է, որ *šau*-ն հայերենում պարսկական փոխառություն է՝ վերացած բուն պարսկերենում, ուր «*սև*» իմաստով կիրառվող բառը *siyāh*-ն է՝ **syāva*-ից²⁵:

Այժմ, եթե *siyāh*-ը, դրանում *s*-ի առկայությամբ պայմանավորված, դիտարկվում է ոչ պարսկական բարբառից փոխառություն, ապա, իհարկե, մենք դեռևս չենք կարող ասել՝ *šau*-ի *š*-ն ծագել է *šy*-ից, թե՞ ուղղակիորեն *sy*-ից: Սակայն եթե պարզելու լինենք, որ *siyāh*-ը պարսկերեն համարվելու այնքան իրավունք ունի, որքան հայ. *šau*-ը, ապա *šau*-ի *š*-ն պետք է պարտադիր կերպով *šy*-ից լինի:

Ուստի՝ մեր խնդիրը պետք է լինի պարզել՝ պարսկերեն բառում հնիս. քմային հնչյունից ծագած **-s*-ի առկայությունը բացառու՞մ է այդ բառի բուն պարսկական ծագումը:

Պարսկերենում հնիս. քմային հնչյունների վերաբերյալ երկու տեսություններ են առաջ քաշվել: Առաջինն՝ ավելի հինը, իր վերջնական ձևակերպումն ստացել է պրոֆեսոր Հ. Ս. Նյուբերգի ձեռամբ՝ 1931-ին²⁶: Երկրորդն առաջարկել է պրոֆեսոր Ջ. Մորգենստիերնը 1945-ին²⁷:

²⁵ ZII ix, 253. (Henning, W., “Das Verbum des Mittelpersischen der Turfanfragmente”, Zeitschrift für Indologie und Iranistik, bd. 9, 1933-34, p. 253): Իրականում Հենինգն այստեղ տպագրել է «*š < sy*», սակայն 207 էջում իր պնդման մեջ նա նշում է, որ սա *š < sy* -ի համար կիրառված կրճատ ձև է:

²⁶ Festschrift Wilhelm Geiger, 213 և հաջորդիվ (Nyberg, H.S. “Einige Bemerkungen zur iranischen Lautlehre”, Studia Indo-Iranica. Ehrengabe für Wilhelm Geiger, ed. W. Wüst. Leipzig, 1931, pp. 213-218):

²⁷ ‘IE k’ in Kafiri’, NTS xiii, 225 և հաջորդիվ (Morgenstierne, G., “Indo-European K in Kafiri”, Norsk tidsskrift for sprogvidenskap/Norwegian Journal of Linguistics, No 13, 1945, pp. 225-238)